

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍՐՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգը համապատասխանում է ՀՀ կրթության ոլորտը կարգավորող օրենսդրությանը և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) կանոնադրությանը:
2. Սույն ընթացակարգով կարգավորվում են նախապատրաստական դասընթացների մասնակիցների ընդունելության, դասընթացների կազմակերպման, անցկացման իրավահարաբերությունները, վճարման կարգը և պայմանները, մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:
3. Նախապատրաստական դասընթացները (այսուհետ՝ դասընթաց) կազմակերպվում են երկարաժամկետ (8 ամսյա տևողությամբ) և կարճաժամկետ (4-ամսյա տևողությամբ) կտրվածքով:

2. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Մասնակիցները նախապատրաստական դասընթացներին մասնակցելու համար ներկայացնում են դիմում և դիմումում պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը (դիմումի ձևը նայել հավելված 1-ում) դասընթացը սկսվելուց առնվազն երկու շաբաթ առաջ՝ Ինստիտուտի նախապատրաստական դասընթացների պատասխանատուին առցանց եղանակով կամ Ինստիտուտ այցելելով: Առցանց եղանակով դիմումներն լրացվում են անցնելով հետևյալ հղումով https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSd-Tu38BPQK-irINVXraOWp6xmEm0-nZb_PUkC5TekgS_16kA/viewform:
5. Դասընթացներին մասնակցության դիմումները կարող են ներկայացվել նաև դասընթացների ընթացքում:
6. Մասնակիցը կարող է գրանցվել ինչպես ամբողջական դասընթացին, այնպես էլ առանձին առարկաներին:
7. Նախապատրաստական դասընթացների սկսվելուց առնվազն 1 ամիս առաջ հայտարարություն է տարածվում Ինստիտուտի կայք էջում՝ www.sportedu.am և ֆեյսբուքյան էջում:
8. Օտարերկրացի դիմորդները Ինստիտուտ ներկայացնում են կրթության կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված փաստաթղթերը:

9. Օտարերկրացի դիմորդների համար դասընթացների կազմակերպման և վերահսկման աշխատանքների իրագործումը դրվում է Ինստիտուտի միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժնի վրա:

3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

10. Երկարաժամկետ (8 ամիս) նախապատրաստական դասընթացները կազմակերպվում և անցկացվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա հոկտեմբեր – մայիս, իսկ կարճաժամկետ (4 ամիս) դասընթացները՝ փետրվար – մայիս ամիսների ընթացքում:
11. Դասընթացները կարող են անցկացվել երկու եղանակով՝ առկա և հեռավար:
12. Դասընթացների պատշաճ իրականացման համար նախապատրաստական դասընթացների պատասխանատուն համապատասխան ամբիոնների և դեկանների, ինչպես նաև միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժնի (օտարերկրացի մասնակիցների մասով) հետ կազմում է դասընթացի առարկայական նկարագրերը (հայերեն, անգլերեն, ռուսերեն) (դասընթացի առարկայական նկարագրի տիպային օրինակը նայել հավելված 2-ում): Առարկայական նկարագրերը հաստատվում են ռեկտորի և ուսումնագիտական գծով պրոռեկտորի կողմից՝ նախապատրաստական դասընթացները սկսելուց առնվազն 8 շաբաթ առաջ:
13. Դասընթացի կառուցվածքը և արժեքը հաստատվում է ուսումնագիտական գծով պրոռեկտորի և ռեկտորի կողմից, յուրաքանչյուր ուսումնական տարի, դասընթացների սկսվելուց 8 շաբաթ առաջ (դասընթացի կառուցվածքը և արժեքը նայել հավելված 3-ում):
14. Դասընթացներն անցկացվում են դասախոսությունների և գործնական պարապմունքների տեսքով:
15. Դասընթացների արդյունավետությունը ապահովելու և փոխանցված գիտելիքները ստուգելու նպատակով կիրառվում են գնահատման հետևյալ ձևերը՝ ստուգումներ և ավարտական քննություններ: Կիրառվում է գնահատման 20 միավորանոց սանդղակ:
16. Դասընթացների անցկացման ընթացքում նոր մասնակիցների հավաքագրվելու դեպքում, առարկաների արդեն ուսուսմանսիրված հատվածները լրացնում են դասախոսի կողմից տրված լրացուցիչ ինքնուրույն աշխատանքներով կամ տեղի է ունենում ինտենսիվ դասընթացներ բաց թողնված հատվածը լրացնելու համար:
17. Դասընթացի ավարտին մասնակիցներին տրամադրվում է դասընթացի մասնակցության վկայական: Դասընթացի կեսից ավելիին անհարգելի չմասնակցելու դեպքում, վկայական չի տրամադրում, իսկ վճարված գումարը հետ չի վերադարձվում:
18. Դասընթացի կեսից ավելին հարգելի պատճառներով բացակայելու դեպքում (հարգելին հավաստող համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու դեպքում) վերադարձվում է մասնակցի գումարը հարգելի բացակայության ժամանակահատվածի մասով:
19. Մասնակիցների և Ինստիտուտի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են պայմանագրով (նայել հավելված 4-ը):
20. Դասընթացները վարում են Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ինչպես նաև հրավիրյալ մասնագետներ:
21. Դասընթացների վարողների վարձատրությունն իրականացվում է ժամավճարային հիմունքներով:

22. Դասընթացներն անցկացվում են հայերեն լեզվով ՀՀ քաղաքացիների համար: Օտրաերկրյա քաղաքացիների համար դասընթացները կարող են անցկացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:

4. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

23. Նախապատրաստական դասընթացները վճարովի են: Յուրաքանչյուր տարի օգոստոս ամսին ռեկտորի հրամանով սահմանվում են նախապատրաստական դասընթացների վճարման սակագները՝ ըստ առարկաների և ըստ քաղաքացիության (սակագները նայել հավելված 5-ում):
24. Մասնակիցները դասընթացների համար վճարում են միանվագ, յուրաքանչյուր կիսամյակի կամ ամսվա կտրվածքով:
25. Դասընթացի որևէ հատվածից միացած ուսանողի հետ ինստենսիվ դասընթացների վարման դեպքում դասընթացի գումարը վճարվում է ամբողջությամբ, իսկ ինքնուրույն աշխատանքների դեպքում, այն հատվածից սկսած:
26. Վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով Ինստիտուտի բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

5. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

27. Սույն ընթացակարգի լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են Ինստիտուտի ռեկտորի կողմից և համարվում են ընթացակարգի անբաժանելի մաս:
28. Սույն ընթացակարգի անբաժանելի մասն են համարվում հավելվածները:
29. Սույն ընթացակարգն ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի կողմից հաստատվելու պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ
(Նախապատրաստական դասընթացներ)
ՀՀ քաղաքացիների համար

ք. Երևան

«————» ————— 202__թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ «Ինստիտուտ»), ի դեմս ռեկտորի պաշտոնակատար՝ Դ.Ս.Խիթարյանի, ով գործում է համաձայն կանոնադրության մի կողմից և Ինստիտուտի Նախապատրաստական դասընթացների մասնակից _____ (այսուհետ՝ Մասնակից), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Սույն պայմանագրի առարկան Մասնակցին՝ _____ հոսքում նախապատրաստական դասընթացների անցկացումն իրականացնելու կարգն ու պայմաններն են:
- 1.2. Նախապատրաստական դասընթացների հոսքերը, ուսուցանվող առարկաները, շաբաթական բեռնվածությունը և վարձը սահմանված է պայմանագրին կից հավելված 1-ում:
- 1.3 Մասնակցի ուսումնառության տևողությունը _____ է:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Ինստիտուտը պարտավոր է.

- 2.1.1. հրամանագրել Ինստիտուտի նախապատրաստական դասընթացներին ընդունված Մասնակցին,
- 2.1.2. Մասնակցին և/կամ նրա օրինական ներկայացուցչին ծանոթացնել դասընթացի անցկացման կարգին, բուհի ներքին կարգապահական կանոններին, դասընթացը կարգավորող այլ իրավական ակտերին,
- 2.1.3. ապահովել անհրաժեշտ պայմաններ տեսական և գործնական արդյունավետ ուսումնառության համար:
- 2.1.4. Դասընթացի ավարտից հետո Մասնակցին տրամադրել դասընթացների մասնակցության վկայական:

2.2. Ինստիտուտը իրավունք ունի.

- 2.2.1. Ինստիտուտի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և պայմանագրով նախատեսված պարտականությունների խախտման կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Մասնակցի նկատմամբ կիրառել կարգապահական տույժեր, ընդհուպ մինչև դասընթացից հեռացվելը.

2.3. Մասնակիցը պարտավոր է.

- 2.3.1. պահպանել Ինստիտուտի կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները, կատարել դրանցով սահմանված իր պարտականությունները.
- 2.3.2. պահպանել էթիկայի և վարքագծի կանոնները.
- 2.3.3. մասնակցել նախապատրաստական դասընթացներին.

2.3.4 սահմանված ժամկետներում կատարել բոլոր այն առաջադրանքները, որոնք նախատեսված են կրթական ծրագրերով

2.3.5. սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը,

2.4. Մասնակիցը իրավունք ունի.

2.4.1 ստանալ որակյալ կրթություն՝ համաձայն ուսուցման ընտրված ծրագրի,

2.4.2 օգտվել Ինստիտուտի նյութատեխնիկական բազայի ընձեռած հնարավորություններից,

2.4.3 ընթացքում փոխել նախապատրաստման ուղղվածությունը,

2.4.4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

3. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Մասնակիցը պարտավոր է վճարել Ինստիտուտի կողմից սահմանված ուսման վարձն ուսումնառության ամբողջ տևողության համար _____ /_____ _____ հազար/ ՀՀ դրամ:

3.2 Ըստ ամիսների վճարման դեպքում Մասնակիցը պարտավոր է մինչև յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը կատարել փոխանցում Ինստիտուտի բանկային հաշվեհամարին:

4. Պայմանագրի գործողության ժամկետները

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև ուսումնառության ավարտը:

4.2. Սույն պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է Մասնակցի՝ նախապատրաստական դասընթացներից ազատման կամ հեռացման դեպքում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագրի կողմերն իրենց պարտականությունները լրիվ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում ազատվում են պայմանագրով սահմանված պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագրի կնքումից հետո ծագած անհաղթահարելի ուժի (Ֆորս-մաժոր) հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխագուշակել կամ կանխել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

5.2. Կողմերը պարտավորվում են վիճահարույց հարցերը լուծել բանակցությունների միջոցով, հակառակ դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով:

5.5. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Սույն պայմանագրին կից հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժան մաս և առանց պայմանագրի իրավաբանական ուժ չունեն:

6. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԻՆՍՏԻՏՈՒՑ

«ՀՖԿՍՊԻ» ՀԻՄՆԱԴԻՐԱՄ
Երևան, Ալ.Մանուկյան փ. 11,
ՀԷԲ Մյասնիկյանի մասնաճյուղ
h/h 038103145163, ՀՎՀՀ 01505821
Ռեկտոր պաշտոնակատար՝
Դ.Ա.Խիթարյան

ՄԱՍՆԱԿԻՑ

Ա.Ա.Հ. _____
Անձն. ___N_____

Տրված «___» _____ կողմ_____

Հասցե _____

ստորագրություն

ստորագրություն

Մասնակցի օրինական ներկայացուցիչ
Ա.Ա.Հ.

Անձն.

___N_____

Տրված «___» _____ կողմ_____

Հասցե

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ

AGREEMENT NUMBER:

(Նախապատրաստական դասընթացներ)

(Preparatory courses)

բ. Երևան

«----»----- 2020թ.

c. Yerevan

"----" ----- 2020

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ «Ինստիտուտ»), ի դեմս ռեկտորի պաշտոնակատար՝ Դ.Ս.Խիթարյանի, ով գործում է համաձայն կանոնադրության մի կողմից և Ինստիտուտի Նախապատրաստական դասընթացների մասնակից (այսուհետ՝ Մասնակից), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

<< The Armenian State Institute of Physical Culture and Sport>> Foundation (hereinafter referred to as the "Institute"), represented by the Acting Rector D. Khitaryan, who acts in accordance with the charter, on the one hand and Attendant of the Institute's Preparatory Courses ----- (hereinafter referred to as the Attendant), on the other hand, signed this agreement as follows:

1. Պայմանագրի առարկան

1. Subject of the agreement

1.1.Սույն պայմանագրի առարկան Մասնակցին՝ ----- հոսքում նախապատրաստական դասընթացների անցկացումն իրականացնելու կարգն ու պայմաններն են:

1.1. The subject of this agreement is the procedure and conditions for conducting preparatory courses for the Attendant in the ----- stream.

1.2.Նախապատրաստական դասընթացների հոսքերը, ուսուցանվող առարկաները, շաբաթական բեռնվածությունը և վարձը սահմանված է պայմանագրի կից հավելված 1-ում:

1.2. Preparatory course flows, subjects taught, weekly workload and the tuition fee is defined in Annex 1 attached to the agreement.

1.3 Մասնակցի ուսումնառության տևողությունը ----- է:

1.3 The duration of the courses is-----months.

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2. The rights and responsibilities of the parties

2.1. Ինստիտուտը պարտավոր է.

2.1. The institute is obliged.

2.1.1. հրամանագրել Ինստիտուտի նախապատրաստական դասընթացներին ընդունված Մասնակցին,

2.1.1. to order the Attendant admitted to the preparatory courses of the Institute,

2.1.2. Մասնակցին և/կամ նրա օրինական ներկայացուցչին ծանոթացնել դասընթացի անցկացման կարգին, բուհի ներքին կարգապահական կանոններին, դասընթացը կարգավորող այլ իրավական ակտերին,

2.1.2. To acquaint the Attendant and / or his / her legal representative with the procedure of the course, the internal disciplinary rules of the institute, other legal acts regulating the course,

2.1.3. ապահովել անհրաժեշտ պայմաններ տեսական և գործնական արդյունավետ ուսումնառության համար:

2.1.3. to provide the necessary conditions for effective theoretical and practical learning.

2.1.4. Դասընթացի ավարտից հետո Մասնակցին տրամադրել դասընթացների մասնակցության վկայական:

2.1.4. At the end of the courses to award the Attendant a certificate of completion.

2.2. Ինստիտուտը իրավունք ունի.

2.2.1. Ինստիտուտի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և պայմանագրով նախատեսված պարտականությունների խախտման կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Մասնակցի նկատմամբ կիրառել կարգապահական տույժեր, ընդհուպ մինչև դասընթացից հեռացվելը.

2.3. Մասնակիցը պարտավոր է.

2.3.1. պահպանել Ինստիտուտի կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները, կատարել դրանցով սահմանված իր պարտականությունները.

2.3.2. պահպանել էթիկայի և վարքագծի կանոնները.

2.3.3. մասնակցել նախապատրաստական դասընթացներին.

2.3.4 սահմանված ժամկետներում կատարել բոլոր այն առաջադրանքները, որոնք նախատեսված են կրթական ծրագրերով

2.3.5. սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը,

2.4. Մասնակիցը իրավունք ունի.

2.4.1 ստանալ որակյալ կրթություն՝ համաձայն ուսուցման ընտրված ծրագրի,

2.4.2 օգտվել Ինստիտուտի նյութատեխնիկական բազայի ընձեռած

հնարավորություններից,

2.4.3 ընթացքում փոխել նախապատրաստման ուղղվածությունը,

2.4.4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

3. ՎճԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Մասնակիցը պարտավոր է վճարել Ինստիտուտի կողմից սահմանված ուսման վարձն ուսումնառության ամբողջ տևողության համար _____

/----- հազար/ ՀՀ դրամ:

2.2 The Institute has right

2.2.1. In case of violation or improper fulfillment of the obligations stipulated by the charter of the institute, internal disciplinary rules and this agreement, the Attendant will be subject to disciplinary sanctions, including expulsion from the courses.

2.3. The Attendant is obliged to:

2.3.1. to preserve the provisions of the Charter of the Institute and internal disciplinary rules, to fulfill the responsibilities defined by them;

2.3.2. to preserve the rules of ethics and behavior.

2.3.3. to attend the preparatory courses .

2.3.4 to complete all the tasks provided by the educational programs within the defined deadlines

2.3.5. to pay the tuition fee on time,

2.4. The Attendant has right:

2.4.1 to receive qualified education according to the educational program selected;

2.4.2 to use the material and technical base provided by the Institute

2.4.3 to change the direction of preparatory learning

2.4.4. Other rights provided by the legislation of the Republic of Armenia.

3. PAYMENT TERMS

3.1. The Attendant is obliged to pay the tuition fee set by the Institute for the entire duration of the study

/_____ /AMD.

3.2 In case of payment by months, the Attendant is obliged to make a transfer to the account of the Institute by the last working day of each month.

3.2 Ըստ ամիսների վճարման դեպքում Մասնակիցը պարտավոր է մինչև յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը կատարել փոխանցում Ինստիտուտի բանկային հաշվեհամարին:

4. Պայմանագրի գործողության ժամկետները

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև ուսումնառության ավարտը:

4.2. Սույն պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է Մասնակցի՝ նախապատրաստական դասընթացների ազատման կամ հեռացման դեպքում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագրի կողմերն իրենց պարտականությունները լրիվ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում ազատվում են պայմանագրով սահմանված պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագրի կնքումից հետո ծագած անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր) հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխագուշակել կամ կանխել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

5.2. Կողմերը պարտավորվում են վիճահարույց հարցերը լուծել բանակցությունների միջոցով, հակառակ դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.4 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով:

5.5 Պայմանագրում հայերեն և անգլերեն տարբերակների միջև հասկաստությունների դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն լեզվին:

5.6.Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Սույն պայմանագրին կից հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժան մաս և

4. Terms of the agreement

4.1. This agreement enters into force from the moment of signing and is valid until the end of the study.

4.2. This agreement is resolved untimely in case of release or expulsion of the Attendant from the preparatory courses or in other cases provided by the legislation of the Republic of Armenia.

5. Final provisions

5.1. In case of full or in part non-fulfillment of the obligations, the parties are released from the liability defined by the agreement due to force majeure arising after the conclusion of this agreement, which the parties could not have predicted or prevented. If the force majeure persists for more than 3 months, each party has the right to resolve the agreement unilaterally by notifying the other party.

5.2. The parties are obliged to resolve the disputed issues through negotiations, otherwise in the manner prescribed by the legislation of the Republic of Armenia.

5.3. This agreement is comprised of two equal copies, one copy is given to each party.

5.4 This agreement is made in Armenian and English languages.

5.5 In case of any misunderstandings between the Armenian and English versions of the Agreement, the Armenian language shall prevail.

5.6. The relations not regulated by this agreement are regulated in the manner prescribed by the RA legislation.

5.7 The Annexes to this Agreement form an integral part of this Agreement and they have no legal force without the agreement.

առանց պայմանագրի իրավաբանական ուժ չունեն:

6. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և

ստորագրությունները

ԻՆՍՏԻՏՈՒՏ

«ՅՖԿՍՊԻ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Երևան, Ալ.Մանուկյան փ. 11,

ՀԷԲ Մյասնիկյանի մասնաճյուղ

h/h 038103145163, ՀՎՀՀ 01505821

Ռեկտոր պաշտոնակատար՝ Դ.Ս.Խիթարյան

ստորագրություն

Մասնակից

Ա.Ա.Հ. _____

Վնձն. _____ N _____

Տրված «__» _____ կողմ _____

Հասցե _____

ստորագրություն

Մասնակցի օրինական ներկայացուցիչ

Ա.Ա.Հ. _____

Վնձն. _____ N _____

Տրված «__» _____ կողմ _____

Հասցե _____

ստորագրություն

6. The Legal addresses of the parties, bank requisites and signatures

INSTITUTE

ASIPCS FOUNDATION

Yerevan, Al. Manukyan 11

AEB Myasnikyan branch

a/c 038103145163, TIN 01505821

Acting Rector Davit Khitaryan

Signature

Attendant

Name, Last name- _____

Passport _____ N _____

Issued [?] [?] _____ code _____

Address _____

Signature

The legal representative of the Attendant

Name, Last name- _____

Passport _____ N _____

Issued [?] [?] _____ code _____

Address _____

Signature



Հավելված 3.

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ

№	Հոսքի անվանումը	Դասավանդվող առարկաներ	Տևողությունը	Շաբաթական ծանրաբեռ.	Առարկայի արժեքը (<< դրամով)	Դասընթացի ընդհ. Արժեքը (<< դրամով)
1.						
2.						
3.						
4.						

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ



ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Դասընթացի անվանումը	Ամբիոն		
Շաբաթական ժամերի քանակ՝	Ժամաքանակի բաշխումը՝ ըստ պարապմունքների ձևերի		
	Տեսական	Գործնական	Ինքնուրույն աշխատանք
2020-2021 ուսումնական տարի Կիսամյակ՝	Գնահատման ձևը՝		
Դասընթացի նպատակն է՝			
Դասընթացի կրթական վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի.			

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.	
Գնահատման մեթոդները և չափանիշներն են.	
Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից. Թեմա 1 Թեմա 2 Թեմա 3	
Հանձնարարվող պարտադիր գրականություն	Լրացուցիչ գրականություն